ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՍԼԱՎԻԿԻ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Հմայակի Պետրոսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետի Կարապետյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լուսինե Խաչատուրի Հայրապետյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. ապրիլի 14-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. մարտի 6-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Արևիկ Փանոսի Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների համատեքստում մշտապես կարևորվում և առաջնահերթություն են դառնում որակի ապահովման գործընթացների կատարելագործման հիմնախնդիրները, մասնավորապես եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ներքին և արտաքին ապահովման փոխկապակցված գործընթացների իրականացումը: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության որակի ապահովումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) անդամ երկրների բարձրագույն կրթության համակարգերի թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման, այդ համակարգերում փոխվստահության ձևավորման և համագործակցության ամրապնդման գործիքներից մեկն է: Որակի ապահովումը նաև առանցքային նշանակություն ունի ակադեմիական շարժունության ընդլայնման, շնորհված որակավորումների համադրելիության ու փոխճանաչման, ինչպես նաև կրթական ծառայությունների վերջնարդյունքների չափելիության ապահովման ու բուհերի վարկանիշի բարձրացման գործընթացներում: Ուստի, կրթական բարեփոխումների համատեքստում որակի ապահովման գործընթացների կատարելագործմանը միտված միջոցառումները ԵԲԿՏ անդամ բոլոր երկրների համար դարձել են ժամանակի հրամայական:

Վերջին քսանամյակում համաշխարհայնացման, կրթության զանգվածայնացման և ԵԲԿՏ-ում իրականացվող բարեփոխումների հետևանքով կերպափոխվել են բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերին ներկայացվող պահանջները՝ առաջ բերելով նոր խնդիրներ ու մարտահրավերներ: Այդ պահանջները մեծամասամբ պայմանավորված են գիտելիքահենք տնտեսության անցմամբ, բարձրագույն կրթության քաղաքականությունների, ռազմավարական ու օրենսդրական մոտեցումների բազմազանություններով, բարձրագույն կրթության արդյունքների համադրելիության անհրաժեշտությամբ, տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջների բազմազանեցմամբ, բարձրագույն կրթության որակի հիմնախնդիրների շեշտադրմամբ, կրթական ծառայությունների որակի նկատմամբ ոլորտի շահակիցների բազմաբնույթ պահանջներով, բարձրագույն կրթության կառավարման գործընթացներում տեղեկատվական և հեռահաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների արագընթաց զարգացմամբ: Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգին առաջադրված նոր պահանջները ենթադրում են տարբեր ուղղություններով քաղաքականությունների, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ռազմավարությունների, կրթական ծրագրերի ու կրթության ոլորտի սուբյեկտների գործառութային շրջանակի համաժամանակյա ու

փոխկապակցված վերանայումներ՝ հաշվի առնելով ազգային (պետական) և եվրոպական մակարդակներում տեղի ունեցող վերջին զարգացումները, ինչպես նաև ոլորտի շահակիցների կարիքներն ու ակնկալիքները:

Հայաստանի Հանրապետությունը ևս, 2005 թվականից մինչ օրս հետամուտ լինելով ԵԲԿՏ-ում տեղի ունեցող կրթական բարեփոխումների ընթացքին և իր ընդունած միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը, քայլեր է ձեռնարկում որակի ապահովման գործընթացներում եվրոպական մոտեցումների կիրառման ուղղությամբ: Այդուհանդերձ, ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում դեռևս առկա են օրենսդրական կարգավորման, որակի արտաքին և ներքին ապահովման քաղաքականությունների ու ռազմավարությունների ոչ բավարար արդյունավետ իրականացման, լիցենզավորման ու հավատարմագրման մեխանիզմների անկատարության, բարձրագույն կրթության սուբյեկտների միջև թույլ համագործակցության, ԵԲԿՏ գործիքակազմի ոչ պատշաճ կիրառման և մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ՀՀ-ին լիովին ինտեգրվելու ԵԲԿՏ-ին: Թեպետ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի հիշյալ հիմնախնդիրները շարունակում են մնալ կրթության ոլորտի հետազոտողների, կառավարիչների, մանկավարժների, տեսաբանների, որակի արտաքին ապահովման գործակալությունների ուսումնասիրությունների առարկա, այդուհանդերձ, ներկայիս բարեփոխումների շրջանակներում ՀՀ որակի ապահովման հիմնախնդիրները հիմնականում գիտական հիմնարար հետազոտության չեն ենթարկվել և պահանջում են առավել խորքային, համակողմանի ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտություն ու նոր մոտեցումների մշակում, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի հիմնախնդիրները և առաջարկել ոլորտի հետագա զարգացմանն ուղղված նոր ուղիներ:

Սույն հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. հետազոտել և վերլուծել բարձրագույն կրթության որակի ապահովման հայեցակարգային դրույթները,
2. վերլուծել բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման ոլորտի եվրոպական և ամերիկյան առաջավոր փորձը,
3. հետազոտել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման ու զարգացման նախադրյալները և հիմնավորել բարձրագույն կրթության սուբյեկտների առանցքային դերը ՀՀ կրթական բարեփոխումների համատեքստում,

4. վերլուծել և համադրել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման օրենսդրական հիմքերն ու ռազմավարական մոտեցումները և հիմնավորել վերջիններիս վերանայման անհրաժեշտությունը,
5. գնահատել ՀՀ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունավետությունը և հիմնավորել հավատարմագրման գործող մոդելի արդիականացման անհրաժեշտությունը,
6. հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել:

Հետազոտության գիտական նորույթը

- առաջին անգամ համապարփակ ձևաչափով վերլուծության են ենթարկվել կրթության որակի ապահովման օրենսդրական, ռազմավարական և գիտական մոտեցումները: Վերլուծության արդյունքներով նորովի լուսաբանվել է բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը,
- սահմանվել է «բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակ (ՈԱԱՇ)» եզրույթը և բացահայտվել են ՀՀ ՈԱԱՇ-ի ձևավորման և զարգացման նախադրյալները՝ հայալեզու գիտամանկավարժական գրականության մեջ վերոնշյալ եզրույթի տարբեր մեկնաբանությունների և դրանց առնչվող հետազոտությունների բացակայության հաշվառմամբ,
- միջազգային փորձի հետազոտության ու ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի բացահայտված խնդիրների հիման վրա մշակվել է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել, որն ընդգրկում է ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր չափանիշներն ու չափորոշիչները, ինչպես նաև ՀՀ բուհերի ստորաբաժանումների ինքնավերլուծության ձևաչափը:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները

1. Բարձրագույն կրթության որակի ապահովման բազմաբաղադրիչ համակարգի արդյունավետ գործառնությունը նպաստում է բարձրագույն կրթության սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և շահակիցների կարիքների ու ակնկալիքների բավարարմանը և հիմնվում է չափելիության, շարունակական բարելավման, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքների վրա:
2. ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի (ՀՀ ՈԱԱՇ) կիրարկման արդյունավետությունը պայմանավորված է բարձրագույն կրթության սուբյեկտների հստակ մշակած քաղաքականությունների, ռազմավարությունների իրականացմամբ,

որակի ապահովման մոդելների գործարկման սկզբունքների, չափանիշների ու չափորոշիչների, որակի արտաքին գնահատման մեթոդաբանության, մեխանիզմների ու գործիքակազմի լիարժեք կիրառմամբ:

3. ՀՀ-ում որակի ապահովման ոլորտի օրենսդրական անկատարությունը, որակի ապահովման պետական քաղաքականությունների ու ռազմավարությունների մասնակի կիրառումը, երբեմն դրանց ոչ հստակ և անիրատեսական լինելը սահմանափակում են կրթական բարեփոխումների լիակատար իրականացումը, խոչընդոտում ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ամբողջական գործարկումն ու բարձրագույն կրթության սուբյեկտների փոխհամագործակցությունը:
4. ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծումն ու կրթական բարեփոխումներով ու կորոնավիրուսային համավարակով պայմանավորված մարտահրավերների հաղթահարումը պահանջում են նոր մոտեցումների մշակում ու կիրառում, որոնք առավել ճկուն ու արդյունավետ կդարձնեն որակի ապահովման գործընթացները:
5. ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացները համակարգված ու արդյունավետ իրականացնելու նպատակով մշակված մոդելի, ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր չափանիշների ու չափորոշիչների ու բուհերի ստորաբաժանումների ինքնավերլուծության ձևաչափի կիրառումը կնպաստեն կրթական բարեփոխումների համաչափ իրականացմանն ու որակի ապահովման մշակույթի ամրապնդմանը ՀՀ բուհերում:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության շրջանակներում բարձրագույն կրթության որակի ապահովմանն առնչվող գիտամանկավարժական, գիտամեթոդական աղբյուրների, ԵԲԿՏ-ում ու ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացները կարգավորող օրենսդրական հիմքերի, քաղաքականությունների, ռազմավարությունների վերլուծության արդյունքներով տեսականորեն ներկայացվել են բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը, ՀՀ որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման ու զարգացման նախադրյալները, ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրները, համակարգվել ու համախմբվել է ոլորտային կուտակված արժեքավոր գիտելիքը: Սույն հետազոտության տեսական արդյունքները կարող են մեթոդաբանական հիմք ծառայել բարձրագույն կրթության բնագավառում գիտական հետազոտություններ իրականացնելու համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն հետազոտության արդյունքները կարող են ներդրվել ՀՀ բարձրագույն

կրթության որակի ապահովման ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացներում: Որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդելը, ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջարկված չափանիշները և բուհերի ստորաբաժանումների համար մշակված ինքնավերլուծության ձևաչափը կարող են կիրառվել բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողների, կրթության կառավարիչների, բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատումներ իրականացնող փորձագետների վերապատրաստման դասընթացներ մշակողների, մանկավարժների, ուսանողների, հետազոտողների և ոլորտի այլ շահակիցների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնահարցերին առնչվող դասընթացներում:

Ատենախոսության եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները ներկայացվել են տարբեր գիտական հոդվածներում և գիտաժողովներում, իսկ բուհերի ստորաբաժանումների համար մշակված ինքնավերլուծության ձևաչափը գործնականում կիրառվել է Հայաստանի եվրոպական համալսարանում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 194 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Բարձրագույն կրթության որակի ապահովման գիտատեսական հիմքերը**», բաղկացած է հինգ ենթագլխից, որտեղ ներկայացված են բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակն ու դրա բազմակողմանի մեկնաբանությունները, որակի ապահովման գործընթացների պատմական զարգացումը, բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը, բարձրագույն կրթության որակի ապահովման առավել տարածված մոդելներն ու դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծված է որակի արտաքին ապահովման միջազգային առաջավոր փորձը:

Առաջին ենթագլխում՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակը», քննարկված են կրթության «որակ» և «որակի ապահովում» եզրույթների միջգիտակարգային սահմանումները, ըստ արտաքին ու ներքին (ինստիտուցիոնալ կամ ենթակառուցվածքային) մակարդակների՝ որակի չափման ու գնահատման ցուցանիշների խմբերը և համեմատված են որակի ապահովման նախկին ու ներկայիս մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ ենթագլխում՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների պատմական զարգացումը», քննարկված են ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացների ձևավորման ու զարգացման չորս փուլերը, բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում առաջնային դերակատարություն ունեցող միջազգային կառույցների գործունեությունը, ոլորտային հիմնախնդիրների լուծումը խթանող եվրոպական փաստաթղթերը, որոնք հիմք ծառայեցին ՀՀ ՈԱԱՇ-ի մշակման համար:

Երրորդ ենթագլխում՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը», առավել մանրամասն ներկայացված են բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի փոխկապակցված բաղադրիչները:

«Բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելների գործարկման սկզբունքներն ու առանձնահատկությունները» խորագրով չորրորդ ենթագլուխը նվիրված է աշխարհում առավել տարածված բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելների (Բոլդրիջի գերազանց կատարողականության, որակի կառավարման եվրոպական հիմնադրամի գերազանցության և գնահատման ընդհանուր շրջանակի մոդելներ) հետազոտմանը և վերջիններիս նմանությունների ու տարբերությունների բացահայտմանը:

Հինգերորդ ենթագլխում՝ «Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման միջազգային փորձը», վերլուծված են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի (QAA), Գերմանիայի (ASIIN), Նիդերլանդների ու Ֆլանդրիայի (NVAO) որակի ապահովման հեղինակավոր գործակալությունների գործունեությունն ու արտաքին գնահատման մոտեցումները, բացահայտված են որակի արտաքին գնահատման մոտեցումների նմանություններն ու տարբերությունները:

«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման ու զարգացման ռազմավարական մոտեցումները» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ բացահայտված են ՀՀ ՈԱԱՇ-ի ձևավորման ու զարգացման նախադրյալները՝ շեշտադրելով որակի ապահովման ազգային շրջանակի կարևորությունը և այն փոխկապակցելով Որակի ապահովման եվրոպական շրջանակի (ՈԱԵՇ) և Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ՈԱԵՉՈՒ) սկզբունքների և

նպատակների հետ: Սույն գլխում նաև վերլուծված են ՀՀ-ում կիրառվող բարձրագույն կրթության որակի ապահովման ռազմավարական մոտեցումները:

«ՀՀ բարձագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման ու զարգացման նախադրյալները» խորագրով առաջին ենթագլխում հիմնավորված են ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), բուհեր) առանցքային դերակատարությունը կրթական բարեփոխումների համատեքստում, վերլուծված է ՀՀ ՈԱԱՇ-ի ձևավորման ու զարգացման փաստաթղթային հենքը: «ՀՀ բարձագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակ» եզրույթի գործածության վերաբերյալ համընդհանուր մոտեցման բացակայությամբ պայմանավորված՝ սույն ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծության հիման վրա բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակը (ՀՀ ՈԱԱՇ) սահմանված է որպես «բարձրագույն կրթության սուբյեկտների մշակած ու հաստատած որակի ապահովման քաղաքականությունների ու ռազմավարությունների, որակի ապահովման չափանիշների, բուհերի գործունեության ու կրթական ծրագրերի ներքին և արտաքին գնահատման մեթոդաբանության ու որակի ապահովմանն առնչվող բոլոր գործընթացների և մեխանիզմների ամբողջություն՝ հիմնված ՀՀ կրթության օրենսդրության, ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի, ոլորտի դերակատարների լիազորությունների և պարտականությունների, ինչպես նաև ՈԱԵՀՈՒ-ի պահանջների վրա»:

«ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումները» խորագրով երկրորդ ենթագլխում վերլուծված են ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումները՝ դրանք դիտարկելով ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, կրթության զարգացման պետական ծրագրերի շրջանակներում: Վերջիններիս բովանդակության խորքային ուսումնասիրությամբ և քննադատական ու վերլուծական մոտեցմամբ վերհանված են մի շարք հիմնախնդիրներ և պարզաբանված ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների պետական ռազմավարական մոտեցումների կիրառման արդյունավետությունը: Վերլուծության արդյունքների հաշվառմամբ հիմնավորված է բարձրագույն կրթության որակի ապահովման պետական ռազմավարական մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը:

«ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական մոտեցումները որակի ապահովման ոլորտում» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են ռազմավարական կառավարման ու որակի ապահովման փոխկապակցվածությունը, վերլուծված են ՈԱԱԿ-ի և ՀՀ 12 հավատարմագրված բուհերի ռազմավարական ծրագրերն ու քաղաքականությունները,

բացահայտված են ոլորտում առկա խնդիրները և հիմնավորած գործող ռազմավարական մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի հետագա զարգացման տեսանկյունից:

Երրորդ գլուխը՝ **«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները»**, բաղկացած է չորս ենթագլխից, որտեղ բազմակողմանի ուսումնասիրության են ենթարկված ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման և ՀՀ բուհերի հավատարմագրման հիմնախնդիրները՝ դրանք դիտարկելով կրթական բարեփոխումների, այդ թվում՝ ՀՀ ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում:

«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում» խորագրով առաջին ենթագլուխը նվիրված է բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական հիմքերի վերլուծությանն ու առկա հիմնախնդիրների վերհանմանը, որոնք համակարգային և ինստիտուցիոնալ լուծումներ են պահանջում:

Երկրորդ ենթագլխում՝ «ՀՀ բուհերի որակի ապահովման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում», ՈԱԵՀՈՒ-ի 10 չափորոշիչների շրջանակում հետազոտված են ՀՀ 15 հավատարմագրված բուհերի որակի ապահովման համակարգերը, գնահատված որակի ապահովման եվրոպական և ազգային (պետական) չափանիշների համահունչության աստիճանը, ինչպես նաև բացահայտված են ՀՀ բուհերի հավատարմագրման հիմնախնդիրները:

Երրորդ ենթագլխում՝ «ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության գնահատում», 14 հավատարմագրված բուհերի ու ոլորտի ներկայացուցիչների (ՈԱ պատասխանատուներ, հավատարմագրման գործընթացում ներգրավված փորձագետներ, դասախոսներ) շրջանում հարցումների ու հարցազրույցների միջոցով գնահատված է ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը և բացահայտված բուհերի որակի ներքին ապահովման համակարգերի վրա հավատարմագրման ազդեցությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել», ներկայացված է ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունների, միջազգային փորձի, հարցումների ու հարցազրույցների արդյունքների հիման վրա մշակված բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդելը (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման առաջարկվող մոդել



Վերջինս բխում է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման օրենսդրական և ռազմավարական խնդիրները թիրախավորելու նպատակադրումից ու կարող է ուղղորդող գործիք հանդիսանալ կրթության որակի ապահովման հիմնախնդիրներով զբաղվող սուբյեկտների համար: Ըստ առաջարկվող մոդելի՝ ՀՀ-ում որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացները պետք է բխեն ՀՀ ազգային անվտանգության, կրթության ոլորտի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերի դրույթներից, պետական մակարդակում որակի ապահովման քաղաքականություններից, ռազմավարություններից, կրթության օրենսդրությունից և հատկապես 2005 թվականից ի վեր ՀՀ ստանձնած միջազգային հանձնառություններից՝ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ամբողջականացման, կայունության ապահովման, բարելավման ու զարգացման նպատակով: Այսպիսով՝ առաջարկվող մոդելով որակի ապահովման գործընթացները կդառնան իրար փոխլրացնող ու փոխկապակցված: Մոդելը միտված է ՀՀ-ում որակի ապահովման մշակույթի ամրապնդմանն ու տարածմանը՝ հիմնվելով մի շարք արժեքային սկզբունքների, կրթության որակի ապահովման խնդիրների վերաբերյալ ոլորտի սուբյեկտների ընկալումների ու իրազեկվածության, որակի ապահովման գործընթացներում ներգրավված շահակիցների փոխհամագործակցության ու հետադարձ կապի վրա: Սույն մոդելի գործարկումն ապահովելու և հատկապես ՀՀ-ում որակի ապահովման մշակույթը վերից վար տարածելու, ամրապնդելու ու զարգացնելու համար ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

- ըստ բոլոր մասնագիտությունների մշակել և հաստատել պետական կրթական չափորոշիչները,
- մեկնարկել ՀՀ ՈԱԾ-ի ինքնահավաստման գործընթացն ու շարունակել ՈՈԾ-ների մշակման աշխատանքները,
- փոխհամագործակցությամբ իրականացնել որակի ապահովման, որակավորումների ճանաչման, ՈԱԾ-ի կիրառման, կրեդիտների փոխճանաչման գործընթացները,
- իրազեկվածության բարձրացման և որակի ապահովման մշակույթի տարածման նպատակներով կազմակերպել և իրականացնել ՈԱԱԿ համակարգողների, ՈՆԱ կառույցների պատասխանատուների և փորձագետների վերապատրաստումներ՝ ԵԲԿՏ գործիքակազմի արդյունավետ կիրառմանն առնչվող թեմաներով,
- վերանայել ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարի, ինքնավերլուծության և փորձագիտական զեկույցների ձևաչափերի կառուցվածքն ու բովանդակությունը,

- ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծություններում ու արտաքին գնահատման զեկույցներում առանձնակի ուշադրություն դարձնել
- բովանդակային վերլուծություններին,
- մեկնարկել ծրագրային հավատարմագրման գործընթացի աշխատանքները՝ նախապես ուսումնասիրելով ԵԲԿՏ-ում ENQA-ի կողմից ճանաչված և EQAR-ում գրանցված որակի ապահովման գործակալությունների լավագույն փորձը,
- ապահովել ուսանողի ներգրավվածությունը ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովում,
- մշակել ՄԿԾ-ների արտաքին գնահատման մոդել՝ շեշտադրելով ԵԲԿՏ գործիքակազմի գործնական կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր ՄԿԾ-ում,
- բուհերի ինքնավերլուծություններում ու հավատարմագրման փորձագիտական զեկույցներում արտացոլել դիպլոմի հավելվածի, ՈԱՇ-ի ու կրեդիտների կիրառման արդյունավետության վերաբերյալ տվյալներ,
- հավատարմագրման գործընթացների թափանցիկության և գնահատումների արժանահավատության բարձրացման նպատակով ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյանում ավելացնել նաև բուհերի ինքնավերլուծությունները և բարելավման պլանների գնահատման արդյունքները:

ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների վերանայման հրատապությունից ելնելով և ատենախոսության շրջանակներում վերհանված խնդիրները, ՈԱԵՉՈՒ-ի ու ոլորտի զարգացման միտումները հաշվի առնելով՝ միջազգային փորձի հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկվում են ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր չափանիշներ ու չափորոշիչներ: Վերջիններս նույնությամբ չեն կրկնում ՀՀ հավատարմագրման գործող չափանիշներն ու չափորոշիչները, թեև պահպանված են որոշ հիմնական հայեցակարգային դրույթներ:

Ի տարբերություն ՀՀ հավատարմագրման գործող չափանիշների՝ առաջարկվող չափանիշները բխում են Հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման 2021 թվականի քաղաքականությունից, առավել համակարգված ու խմբավորված են, ինչպես նաև բուհերին ընձեռում են փաստաթղթերի և այլ հիմքերի առավել օպտիմալ բաշխման հնարավորություն: Բացի այդ, առաջարկվող տարբերակում ներմուծված են չափորոշիչներ, որոնք առանցքային կարևորություն ունեն ՀՀ բուհերի գործունեության բարելավման գործում, և որոնք գործող տարբերակում բացակայում են:

Առաջարկվող չափանիշները հետապնդում են երեք առանցքային նպատակ՝ 1) աջակցել բուհերի ռազմավարական կառավարման և որակի մշակույթի ամրապնդմանն ու զարգացմանը՝ կարևորելով բոլոր գործընթացներում նորարարությունն ու բազմազանությունը, 2) նպաստել բուհերի ակադեմիական, հետազոտական կարողությունների զարգացմանը, 3) նպաստել բուհում ուսանողակենտրոն կրթական միջավայրի առկայությանը:

Բուհերում որակի ապահովման գործընթացները կանոնակարգված իրականացնելու և բուհի հաշվետվողականությունը բարձրացնելու համար մշակվել է նաև կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության ձևաչափ, որն արտացոլում է վերոնշյալ չափանիշների պահանջները: Ձևաչափը ներառում է բուհի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր տարրերի և բուհի ամբողջ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության պլանավորմանը, իրականացմանը և գնահատմանը վերաբերող չափանիշներ ու չափորոշիչներ, որոնք համահունչ են ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջարկվող չափանիշներին ու չափորոշիչներին: Ձևաչափում սահմանված չափանիշներն ու չափորոշիչները նախատեսված են արձանագրելու ստորաբաժանումների ձեռքբերումներն ու բացթողումները: Առաջարկվող ձևաչափն առավել կհեշտացնի բուհի հավատարմագրման գործընթացը, քանի որ ձևաչափով նախատեսված ինքնավերլուծության բովանդակությունը հիմք կծառայի բուհի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման ու ինքնավերլուծության զեկույցի պատրաստման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամանկավարժական, գիտամեթոդական աղբյուրների, որակի ապահովման ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական փաստաթղթերի, ազգային ու միջազգային փորձի ուսումնասիրության, ՀՀ բուհերի շրջանում անցկացված հարցումների ու հարցազրույցների արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. ԵԲԿՏ-ին ամբողջական ինտեգրման տեսանկյունից ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բարելավումը, ՀՀ-ում որակի ապահովման մշակույթի զարգացումը, տարածումն ու ամրապնդումը, կրթական բարեփոխումների ամբողջական ու համակարգված իրականացումը հնարավոր է միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված, ՀՀ բարձրագույն կրթության առանձնահատկությունները հաշվառած որակի ապահովման ազգային համակարգի ճշգրիտ գործառնությամբ, ինչը տրամաբանական, համակարգված, թիրախային, համադրելի, ճանաչելի ու

թափանցիկ կդարձնի որակի ապահովման փոխկապակցված գործընթացները հանրապետական ու միջազգային մակարդակներում:

2. ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի մաս կազմող ՈԱԱՇ-ի կիրարկման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ՈԱԵՉՈՒ-ի սկզբունքների ճշգրիտ կիրառությամբ, պետության ռազմավարական մոտեցումներով, ոլորտի շահակիցների հետ սերտ ու երկարաժամկետ համագործակցությամբ:
3. Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման խնդիրները սերտորեն փոխկապակցված են օրենսդրության անկատարության, ռազմավարական կառավարման մոտեցումների մասնակի կիրառման, կրթության կառավարման մասնագետների պրոֆեսիոնալիզմի ոչ բավարար մակարդակի ու մի շարք այլ խնդիրների հետ:
4. Բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման համակարգում առկա խնդիրների (կառավարման գործընթացներում ՊԻԳԲ որակի կառավարման սկզբունքի թերի կիրառման, կառավարման ու որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավվածության սակավության ու շահագրգռվածության պակասի, կրթական ծրագրերի բարելավման վրա միջազգայնացման գործընթացների թույլ ազդեցության, ներքին և արտաքին գործոնների նպատակային վերլուծությունների բացակայության, որոշ դեպքերում նաև՝ փաստաթղթային հենքերի և ՈՆԱ գործող համակարգերի անհամապատասխանության) բազմազանությունը խոչընդոտում է ՀՀ-ին համընթաց շարժվել կրթության արդիականացման բարեփոխումներին և պահանջներին ու նվազեցնում հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը:
5. ՀՀ որակի ապահովման համակարգի զարգացմանը խոչընդոտում է նաև լիցենզավորման ու հավատարմագրման գործընթացների առանց փոխլրացնող մոտեցման կազմակերպումը և իրականացումը: Լիցենզավորման գործող պահանջներն ու պայմանները վերանայման անհրաժեշտություն ունեն, քանի որ դրանք ընդհանրական են և տարանջատված չեն ըստ ոլորտային առանձնահատկությունների ու կրթական աստիճանների:
6. Հավատարմագրման գործող մոդելը վերանայման կարիք ունի, քանի որ լիարժեք չեն արտացոլվում ՀՀ և ԵԲԿՏ տեղի ունեցող բարեփոխումները: Խնդրահարույց է հատկապես 2011 թվականին ընդունված չափանիշներով հավատարմագրում իրականացնելը, որոնք թեև ուղղորդող նպատակ ունեն, սակայն թույլ չեն տալիս թիրախային խնդիրներ բացահայտել և նպաստել բուհերի զարգացմանը:
7. Հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը նվազեցնում են դրա համար հատկացված ոչ բավարար ժամանակահատվածը,

ինքնավերլուծությունների և փորձագիտական զեկույցների ձևաչափի թերությունները, պահանջվող փաստաթղթերի ծավալը ու զեկույցներում բուհի գործունեության վերաբերյալ տվյալների ոչ ամբողջական արտացոլումը՝ վտանգելով ոլորտի հետագա զարգացումը:

8. ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման խնդիրների լուծումը հրատապ է դարձնում պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում քաղաքականությունների, ռազմավարական մոտեցումների, օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, որակի ապահովման մեխանիզմների ու գործիքակազմի վերանայումները: Վերջիններս պետք է փոխլրացնեն իրար, բխեն պետական գերակայություններից և նպատակաուղղված լինեն ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մրցունակության բարձրացմանը:

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակում մշակված ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման մոդելի, ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների, չափորոշիչների ու ՀՀ բուհերի ստորաբաժանումների ինքնավերլուծության նպատակով մշակված ձևաչափի կիրառումը կնպաստի բարձրագույն կրթության սուբյեկտների միջև համագործակցային կապերի ընդլայնմանը, կփոխկապակցի ռազմավարական կառավարման ու որակի ապահովման գործընթացները, կբարձրացնի ՀՀ բուհերի հաշվետվողականությունը և ԵԲԿՏ-ում ճանաչելի կդարձնի որակի ապահովման փոխկապակցված գործընթացները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում.

1. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգ. հավատարմագրումը որպես որակի արտաքին ապահովման մեխանիզմ, ԲՊՀ, Բանբեր. Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(51), Երևան, Լինգվա, 2020, էջեր 135-151:
2. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների համադրման առանձնահատկությունները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես 2(4), Երևան, ԵՊՀ, 2020, էջեր 25-41:
3. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման

համատեքստում, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես 1(3), Երևան, ԵՊՀ, 2020, էջեր 22-39:
4. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման և զարգացման նախադրյալները, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես 1(5), Երևան, ԵՊՀ, 2021, էջեր 20-33:
5. Սարգսյան Կ., Մովսիսյան Տ., Կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշների ու ուղենիշների (ՈԱԵՉՈՒ) կիրառումը ՀՀ բուհերում, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու 13(01), Երևան, «ԵՀ» հրատարակչություն, 2022, էջեր 6-21:
6. Մովսիսյան Տ., Բարձրագույն կրթության որակի ապահովման ռազմավարական մոտեցումները ՀՀ-ում, ԲՊՀ, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, Բանբեր, 2(59), Երևան, Լինգվա, 2022, էջեր 128-148:
7. Մովսիսյան Տ., Բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելի գործարկման սկզբունքներն ու առանձնահատկությունները, ԲՊՀ, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, Բանբեր, 2(57), Երևան, Լինգվա, 2020, էջեր 56-72:
8. Մովսիսյան Տ., ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման պետական ռազմավարական մոտեցումները, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, No 1(20), Երևան, 2022, էջեր 50-63:
9. Մովսիսյան Տ., ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու 13(02), Երևան, «ԵՀ» հրատարակչություն, 2022, էջեր 16-23:

МОВСИСЯН ТАТЕВИК СЛАВИКОВНА

ПУТИ РЕШЕНИЯ ОСНОВНЫХ ПРОБЛЕМ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА В КОНТЕКСТЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ РЕФОРМ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”. Защита диссертации состоится 14.04.2023г. в 14:00 на заседании специализированного совета 058 ВАК по Педагогике, действующего при ЕГУ.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52а , корпус факультета армянской филологии ЕГУ, N 208 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность темы. В контексте проводимых реформ в сфере высшего образования приоритетными стали проблемы совершенствования процессов обеспечения качества образования, в частности, реализация взаимосвязанных процессов внутреннего и внешнего обеспечения качества в соответствии с европейскими стандартами. За последние двадцать лет в результате образовательных реформ в ЕПВО, изменились требования, предъявляемые к системам обеспечения качества высшего образования, *порождая* новые проблемы и вызовы. С 2005 года РА следит за ходом образовательных реформ, происходящих в ЕПВО, и обеспечивает выполнение принятых международных обязательств, а также предпринимает шаги по применению европейских подходов в процессах обеспечения качества. Тем не менее, по-прежнему существуют проблемы обеспечения качества высшего образования в РА, препятствующие полной интеграции РА в ЕПВО. Хотя проблемы системы обеспечения качества высшего образования РА продолжают оставаться предметом изучения исследователей в области образования, тем не менее, в рамках проводимых реформ проблемы обеспечения качества РА не подвергались достаточному научному анализу и требуют необходимости более глубоких, всесторонних исследований и принятия новых подходов.

Цель исследования выявить проблемы системы обеспечения качества высшего образования РА и предложить новые пути дальнейшего развития сектора.

Научная новизна исследования. Впервые комплексно проанализированы законодательные, стратегические и научные подходы к обеспечению качества образования. По результатам анализа по-новому

освещена структура системы обеспечения качества высшего образования; определен термин «национальная рамка обеспечения качества высшего образования» (НРОК) и выявлены предпосылки формирования и развития НРОК РА, принимая во внимание разночтение вышеназванного термина и отсутствие соответствующих исследований в армяноязычной научно-педагогической литературе; на основе изучения международного опыта и выявленных проблем сектора обеспечения качества высшего образования РА была разработана новая модель организации процессов обеспечения качества высшего образования, включающая новые критерии и стандарты институциональной аккредитации вузов РА, а также формат самоанализа подразделений университета РА.

Теоретическоая значимость исследования. В результате комплексного исследования теоретически представлена структура системы обеспечения качества высшего образования и предпосылки формирования и развития национальной системы обеспечения качества РА, проблемы обеспечения качества высшего образования РА.

Практическая значимость исследования. Результаты этого исследования могут быть реализованы в процессах реформ, осуществляемых в сфере обеспечения качества высшего образования РА. Разработанная модель организации процессов внешнего обеспечения качества, критерии институциональной аккредитации, формат самоанализа, разработанный для подразделений вуза, могут быть использованы специалистами по управлению высшим образованием. Выводы, основания и рекомендации были представлены в различных научных статьях и конференциях, а формат самоанализа, разработанный для подразделений университета, был практически применен в Европейском университете Армении.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Объем диссертации составляет 194 страниц.

TATEVIK SLAVIK MOVSISYAN

THE WAYS OF SOLVING THE ISSUES OF RA HIGHER EDUCATION QUALITY ASSURANCE IN THE CONTEXT OF EDUCATIONAL REFORMS

Dissertation for the Scientific Degree of Candidate of Pedagogical Sciences (PhD) on the specialty 13.00.01 - "Theory and History of Pedagogy". The defense of the dissertation will take place on April 14, 2023 at 14:00 at the session of the Special Board 058 on "Pedagogy" SCC (Supreme Certifying Committee) on awarding scientific degrees at Yerevan State University.

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room N 208.

SUMMARY

The actuality of the research. In the context of the current reforms in the field of higher education, the issues of refining the processes of education quality assurance, particularly, the implementation of interrelated processes of internal and external quality assurance in line with the European standards, have become a priority. In the last twenty years, as a result of the educational reforms taking place in the EHEA, the requirements for the higher education QA systems have changed, bringing new issues and challenges. Since 2005, the RA, pursuing the process of educational reforms taking place in the EHEA and ensuring the fulfillment of its adopted international obligations, has been taking steps towards the application of European approaches in QA processes. Nevertheless, there are still issues in the field of RA higher education quality assurance that prevent the fully integration of the RA into the EHEA. Although the issues of the RA higher education QA system continue to be the subject of studies by researchers in the field of education, within the framework of the current reforms, the issues of RA quality assurance have not been subjected to scientific fundamental research and require the need for more in-depth, comprehensive research and the adoption of new approaches.

The aim of the research is to identify the issues of the RA higher education quality assurance system and suggest new ways for further development of the sector.

The scientific novelty of the research. Legislative, strategic and scientific approaches to ensuring the education quality were comprehensively analyzed for the first time. Based on the results of the analyses, the structure of higher education quality assurance system was newly revealed. the definition of the term "national framework for higher education quality assurance (NFQA)" was defined and

the prerequisites for the formation and development of the RA NFQA were presented, taking into account different interpretations of the above-mentioned term in the Armenian pedagogical literature and the absence of the related research; based on the study of international experience and the identified problems of the RA higher education quality assurance sector, a new model for the organization of higher education quality assurance processes was developed, which includes the new criteria and standards for institutional accreditation of RA HEI's, as well as the self-analysis template of RA HEI's organizational units.

The theoretical significance of the research. Based on the results of the analyses, the structure of the higher education quality assurance system and the prerequisites for the formation and development of the RA national framework for quality assurance, the issues of quality assurance of RA higher education were theoretically presented.

The practical significance of the research. The results of this research can be applied in the processes of reforms implemented in the field of RA higher education quality assurance. The developed model, the proposed criteria for institutional accreditation, the self-analysis template developed for HEI's units can be applied by higher education managers.

The structure and volume of the dissertation. The dissertation paper comprises an introduction, three chapters, conclusions, list of references and appendices. The volume of the dissertation paper is 194 pages.